ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 58

«02» սեպտեմբերի 2019 թվական գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0043-0001-ԻՑ, 0002-ԻՑ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.04262 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՍՏՅՈՊԱ ՀԱԿՈԲԻ ՏՈՆԱՊԵՏՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, 2-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՇԴ1/0993/02/18 քաղաքացիական գործով 18.06.2019 թվականի դատարանի վճռով Շիրակի մարզի Հովունի գյուղի 1-ին փողոցի, 5-րդ նրբանցքի թիվ 3 հասցեում գտնվող 299.03 քառակուսի մետր մակերեսով անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության հիմքով ճանաչվել է Ստյոպա Հակոբի Տոնապետյանի սեփականության իրավունքը և քաղաքացու դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի սեփականությունը համարվող 0043-0001-ից, 0002-ից կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0.04262 հեկտար հողամասը, որի վրա առկա է քաղաքացի՝ Ստյոպա Հակոբի Տոնապետյանի կողմից գնված 229.03 քառակուսի մետր մակերեսով շինություն /արհեստանոց՝ կից սենյակներով, որը հետագայում

վերակառուցվել է բնակելի տան, հասցե՝ Մարմաշեն համայնքի, Հովունի գյուղի 1-ին փողոց, 5-րդ նրբանցք, թիվ 3 տուն/ ուղղակի վաճառքով, տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման /գտնվելու վայրի/, գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին» թիվ 1746-Ն որոշման 2-րդ կետի «դ» ենթակետով սահմանված լրացուցիչ նվազեցնող 0,6 գործակցի կիրառմամբ, մեկ քառակուսի մետրը՝ 86.4 ՀՀ դրամ, 0.04262 հեկտար հողամասի համար՝ 368500 /երեք հարյուր վաթսունութ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ արժեքով վաճառել քաղաքացի՝ Ստյոպա Հակոբի Տոնականյանի /անձնագիր AH0343408, տրված՝ 08.03.2007 թվական, 030-ի կողմից/:

2. Նշել, որ սույն որոշման առաջին կետում նշված հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում, հողամասի օտարումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Մարմաշեն համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյանին.

ա/Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացի՝ Ստյոպա Հակոբի Տոնականյանի հետ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի առուվաճառքի պայմանագիր:

բ/Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը:

4. Համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագիծը կցվում է որոշմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Ձեռնպահ՝*
ՌՈՒՍՏԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	--------	----------	----------
ԱՐՏՅՈՄ ԶԱՔԱՐՅԱՆ՝	---------	----------	----------

ՍԼԱՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ --------- ---------- ---------- ----------

ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ՝ --------- ---------- ---------- ----------

ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ՝ --------- ---------- ---------- ----------

ՋԱՆԻԲԵԿ ՂԱՖԱՐՅԱՆ՝ --------- ---------- ---------- ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

«02» սեպտեմբերի 2019 թվական
գյուղ Մայիսյան